

Արամ Գ. Ալեքսանյան  
Բանաս. գիր. թեկնածու

## ՀԻՆ ԹԻՖԼԻՍՆ ՈՒ ԳԱՐԵԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ\*

Գարբիել Սունդուկյանի գեղարվեստական ժառանգությունը պատմամշակութային որոշակի համատեքստի արդյունք է, որի շրջանակներում էլ անհրաժեշտ է այն դիտարկել:

«Հին Թիֆլիսը հայոց գրականությանն էլ երկու մեծ անուն է բողել՝ Սայաթ-Նովա և Գարբիել Սունդուկյան: Հարազատ, Թիֆլիսի լեզվով, Թիֆլիսի շնչով, Թիֆլիսի հոգով»<sup>1</sup>, - գրել է Հովհաննես Թումանյանը՝ Գ. Սունդուկյանի ստեղծագործության ինքնատիպությունը խորագիտորեն պատճառաբանելով **հին Թիֆլիսի** իրականությամբ, ավանդական կենսակերպով, գումար ու զվարք կողրիխով:

Ըստ Էռիքյան՝ քաղաքի տարեգորության մեջ առանձնացնելով իրենց պատմական բովանդակությամբ տարբեր հին և նոր շրջանները, Հ. Թումանյանը իր անկրկնելի ոճով ցույց է տվել, թե ինչո՞վ էր հատկանշական **հին Թիֆլիսը**. «Են մի առանձին, յուրատեսակ աշխարհը էր, որի մեջ եկել միացել էին կովկասյան ժողովուրդներն ամենքն իրենց առանձնահատուկ կյանքով ու երանգով և հորինել էին ազգերի մի վերին աստիճանի գրավիչ ու հետաքրքրական խառնուրդ ու կյանք: ... Մի ուրախ հարամերատուն, ուր հրավիրված էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը՝ քեֆ քաշելու... Զուտնա, դիոլ, դայիրա, նադարա, ծափ-ծիծաղ, պար, երգ... էն էլ ոչ թե տներում, այլ դուրսը, դրներին, կտորներին: Մանավանդ իրիկնապահերին: Կիրակի ու տոն օրերը հո զլուս թեր, որ դիմանա: Զուրված, զարդարված շրջվսկում ու զրդնգում էր ամբողջ քաղաքը: Տեսնողը զարմանում էր, թե էս մարդիկը ե՞ր ե՞ր են աշխատում, որ էսպես շարունակ ուրախանում են ու պար զալի: Էսպես էր ապրում հին Թիֆլիսը՝ զժի նման»<sup>2</sup>:

20-րդ դարի սկզբին ուսու մտավորական Ռ. Իվանը առաջին անգամ լինելով Թիֆլիսում, իր հուշերում գրում էր. «Ոչ մի տեղ կյանքը այնպես չես զգում, ինչպես այստեղ: Քաղաքն ամբողջությամբ վառ արևային գույների մեջ է: Այդ պատճառով էլ վիշտն այստեղ ավելի դառն է, ուրախությունն՝ առավել բուռն, իսկ սերը

\* Հայաստանի անկախության 20-ամյակի հետ կապված՝ ընթերցողներին կարող է հետաքրքրել մեր հանրային կյանքի ավանդական հիմքերի խարիսման մասին՝ **հին Թիֆլիսում** սկսված և ներկայում նոր երևանում շարունակվող դիսկուրսը: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 2.09. 2011:

1 Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև ԵԼԺ), տասը հատորով, Եր., 33 գԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1995, հ. 7, էջ 29:

2 Նույն տեղում, էջ 27-28:

գեղեցիկ է և բռնկուն: Այստեղ գորգերն անգամ թափ են տալիս ինչ-որ առանձնահատուկ ուրախությամբ: Մշգավաճառները և բանջարեղենն վաճառողները ավելի շուտ նման են պատահաբար այստեղ հայտնված ծաղրածուների: Նրանք չեն կարող հանգիստ խոսել, նրանք պետք է հոհուան, ծիծաղեն, պրամտեն, շխնայելով անգամ իրենց սեփական ապրանքը»<sup>3</sup>:

Հովհաննես Թումանյանի բնութագրած **իհն Թիֆլիսի** հանրության գվարք ու կենաւրախ կյանքը, ըստ Էուրյան, արդյունք էր դեռևս պահպանվող միջնադարյան համայնքային կազմակերպվածության: Միջնադարի ավատական ներփակ, ինքնարավ (ավտարկիկ) համայնքը շատ հետազոտողներ իրավամբ համեմատել են մերդափեթակի հետ, որը բավարարվում է սեփական արտադրանքով և քայլայվելու մշտապես վերաստեղծվում է միևնույն սկզբունքով ու կերպով: Հայտնի է նոյնպես, որ համայնքը կարգավորող մշակութային արժեքները ստեղծվում են հավաքականորեն, կուեկտիվի կողմից: Գերազույն արժեքները ստեղծող սուրյակատը, ըստ Էուրյան, համայնական հանրության հավաքական կամքն է, որն էապես մշտված է տվյալ հանրության համընդհանուր բարօրությանը, այդ իսկ պատճռով էլ կյանքի կոչված բարոյականությունը մշտապես **արդար է և ծշմարիտ**: Կուեկտիվի փորձից որոշարկված ավարտուն մշակույթը հանրության կյանքում մակածում է հոգեբանական և բարոյական միակամուրյուն, որի շնորհիվ անհատի կյանքը համայնքում, առանց ազատության կորսափ, իդեալականորեն ներդաշնակվում է հանրության համակեցությանը: **Հին Թիֆլիսի** համայնակեցության անադարտ ժամանակներում հանրայնորեն ստեղծվել էր այնպիսի կենսածեն, ուր Սուներուկյանի բնորոշմանը՝ «ամեն մեկը դիմումի համար էր փիքը անում, ու դիմումը ամեն մեկի (լնդգծումը մերն է - Ա. Ա.)»<sup>4</sup>:

«Միջնադարյան մարդու կյանքը առաջին հերթին անմիջականորեն հասարակական էր, պաշտոնական, ավանդական նորմերի և սովորույթների հունով իրացվող: Նա դեռ իրենից չէր ներկայացնում մասնավոր, անձնական մարդկային ճակատագիր: Մարդն ապրում էր ավատական միավորումների, փերակների մելուսացված կեցությամբ: Մասնավոր կյանքը այդ կանոնակարգված աշխարհում դրսւորվում էր սոսկ իիրն առանձին շեղում անսպասելիորեն հակասություն հարուցելով պատական կեղևի և մարդու բնության խորքերի, նրա բնական ձգտումների և որակների միջն»<sup>5</sup>, -գրում է գրականագետ Վ. Կոժինովը:

Նման պարագայում բարոյական նորմը հետերոնոմ չէ, չի պարտադրվում դրսից, այլ ինքնորոշ է և բխում է կուեկտիվի դեռևս չտարբերակված ես-ից, նրա հավաքական էությունից և շարունակում է փոխանցվել տպորույթի ուժով, սովորութենական հոգեբանությամբ՝ ամբողջությամբ տոգորված լինելով եղբայրության, արդարության, մարդասիրության զգացումներով: «Մեզ ծվասող խղճի խայրը, վիշտը, անհանգստություններն ու տագնապները չին բնակվում նրանց հարկերի տակ: Այնտեղ, ընդհակառակը, թագավորում էր խոնարի պարզությունը, բնական ուրախությունը, անմիջական մաքրությունը և հասարակ անմիջականությունը: ...Աշխատանքը նրանց համար վերածվում էր զվարճանքի ու հաճույքի: Համայնքում սիրում էին իրար այն պատճառով, որ բոլոր էակները ուժեղ էին շնորհիվ իրենց միասնության չափի: Թագավորում էր լիակատար վստահությու-

3 Իվնեվ Պ., Ս պոնոջիա Մտամինձ, Մ., 1973, ս. 158.

4 Գարդիել Սուներուկյան, ԵԼԺ, հ.3, Եր., 1952, էջ 268:

5 Կօջինօ Բ., Պրօնչօջնեն ռոման, Մ., 1963, ս. 83.

նը»<sup>6</sup>, - նույն երևույթի մասին գրում է 18-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա Դ. Լ. Դեշանը:

Չնայած պետական որոշ հաստատությունների առկայությանը, պատմության, տնտեսական հարաբերությունների զարգացումը Թիֆլիսում դեռևս չեր ձևավորել հասարակություն: Քաղաքային կյանքն այնտեղ դեռևս ավատական հանրակեցություն ուներ՝ միջնադարյան համայնքին բնորոշ իր խավերով ու դասերով, ավանդականորեն խայտարդես ու գունեղ հանրությամբ: Հայտնի էին համբարական՝ արիեստավորական միությունները, իրենց ուստաներով և ուստարաշիներով, համբարությունը խորհրդանշող դրոշակներով, իրենց սոցիալական դիրքի հիմքերը հաստատող աշխատանքի և արդար վաստակի զգրված օրենքի ուժ ունեցող կանոններով, ավանդաբար փոխանցվող պատվախնդրության շեշտադրումներով, դրանք ամրակայող բանավոր մշակույթով՝ ավանդույթներով, սովորություններով ու վարքով:

Թիֆլիսին բնորոշ արևելյան գունեղ կոլորիտը լրացնում էին մեյդանի դրվաններն ու բազազիանաները, կինտոններն ու մանր առևտրականները՝ իրենց աշխույժ առօրյային բնորոշ բառապաշտություններով, կատակներով, անգամ հայինյանքներով:

Ըստ **սոցիալական հոգեբանության** լեզուն, սովորույթները և միջերը համայնքի գործունեության և փորձի արդյունքն են: **Հին Թիֆլիսի** հանրության կենսաձևը, ըստ էության, անցյալ դարի կեսերին դեռևս կենսունակ ու անաղարտ էր միջնադարյան արիեստավորական և մանր առևտրական տիրապետող խավերի հավաքական կամքով ու էությամբ մշակված ավանդական մշակույթով, որի համատեքսում անձի վարքը լիարժեքորեն պատճառարանվում էր ավատական համանշանակ նորմերով: Անհատական հոգեբանությունն պատմականորեն դեռևս չեր որոշարկվել՝ քաղաքային և հանրային իրականության ոչ բավարար զարգացածության և տարրերակվածության պատճառով:

Սակայն իր դիրքով, դասային հոգեբանությամբ և նոր կենցաղավարությամբ քաղաքում սկսել էր առանձնանալ, հատկորշվել հարստացող առևտրականների ու վաճառականների դասը, որը քաղաքային կյանք էր ներմուծում ավանդական կեցածնին խորը բարքեր, պերճ ու ցովի կենցաղավարություն՝ փոփոխություններ, որոնք ավանդական կանոնիկ համակեցությունն աստիճանաբար այլասերելու վտանգ էին ներկայացնում: Հայտնի է սակայն, որ նման համայնակեցության՝ դարեր շարունակ նույն սկզբունքներով վերարտարրվող կենսաձևն ամեն մի փոփոխության ու շեղման արձագանքում է զգուշորեն, մերժելով, ծաղրելով, որը նրա պատմական գոյության կերպի բնական ինքնապաշտպանական արձագանքն էր, մշակութային դիմակայությունը: Համայնքում նորամուտ բարքերը նախապես ընկալվում են որպես մասնակի շեղում ավանդական զգրված մշակութային արժեքներից, դասային անաղարտ վարքից և բարոյականության կանոններից:

Եվ քանի որ բանահյուսական աշխարհներական և ավանդական համանշանակ բարոյական ըմբռնումները դեռևս չեին տրոհվել և կենսունակ ու գործուն էին հանրության գիտակցության մեջ, այդ պատճառով էլ արագ հարստացող առևտրական խավի ավանդական նորմերը շրջանցող գործելակերպը և վարքը նախապես դրսադրվում էին քողարկված, դիմակավորված: Քանզի հանրային հարաբերություններում այդ խավը, ավանդական բարոյականությունից շեղվելու

6 Դ. Լ. Դեշան, Իстина, или истинная система, М. 1973, с. 220.

պատճառով, ինքնաբերաբար դրսնորում էր խաղային, թատերական հոգեբանություն ու վարք:

Երգիծական դրամատորգիայի ծագումը, ըստ Էության, ավանդաբար կազմակերպվող համայնքի ինքնապաշտպանական բնագիտ արդյունք է, որը կոչված էր, թեմ հանելով և հանրությանը ի ցույց դնելով, դիմակազերծելու նոր խավերի քողարկված, երկատված հոգեբանությունն ու վարքը: Եվ, իրոք, առևտրական հարաբերությունների ուժով հարստացող խավի առօրեական թատերականացված կենածնը, դասային վարքը տեղափոխվում է թեմ, որտեղ էլ, հանրությանն ի ցույց, դառնում է **դիմակազերծման արարողություն:** Իրողություն, որն իր ծագումնարանությամբ, ըստ Էության, արդյունք է միջնադարյան համայնքի ինքնակազմակերպման, ինքնակայացման, ծաղրախաղով մաքրվելու և վերստին ամբողջականորեն կենսագործվելու հավաքական բնագրի:

Այս առնչությամբ անհրաժեշտ է հիշատակել Հին Թիֆլիսի բնորոշ և նման գործառույթ ունեցող քաղաքային-ժողովրդական խաղերը, զանգվածային թատերականացված քափորները և հատկապես ավատական քաղաքի բանահյուտքյան ավանդական դրսնորումներից մեկը՝ մեջյանում խաղացվող բացօրյա դատական ծաղրախաղը՝ «**Աեյնոքան**», որի թատերական ծիսակարգությամբ, միջնադարյան **կառնավալների** և **սատուրնալիաների** համանմանությամբ և ոգով պասկազերծվում էր ներփակ քաղաքի հանրությանը հայտնի հարստացող խավերի, կոնկրետ անձերի վարագությամբ կենցաղը, բարյաշեղ վարքը, քաղաքի անցուղաքածի խոտելի երևությունները: Անհետացող համակեցությունը, ըստ Էության, բնականորեն մակածում էր մշակույրով արտահայտվող ինքնապաշտպանական յուրահատուկ դիմակայություն: «Առավել պարզունակ հասարակարգերում, եթե հավատանք մարդարաններին, մշակույրի, կրոնի և ծեսի գիսավոր նշանակությունը փաստորեն հանգում է այս բանին, որպեսզի բոյլ չտրվի փոփոխություն: Խոկ դա նշանակում է զինել սոցիալական օրգանիզմը այն բանով, որպեսզի կյանքը նողական ձևով առանձնացնի կենդանի օրգանիզմներ, ստեղծի իր տեսակի մշտապես անփոփոխ մնալու ընդունակություն և միայն շատ աննշան ձևով արձագանքի շրջապատող աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին և ցնցումներին»<sup>7</sup>, -գրում էր նշանավոր գիտնական Ռ. Օպենհեյմերը:

Վերոնշյալ թատերախաղերում քաղաքի բարձրաստիճան, մեծահարուստ «երևելիները» ներկայացվում էին ծաղրի և բարոյականության դատաստանին, որը հատկապես ցածր խավերի հոգեբանության մեջ կատարում էր **կատարսիսի** շեշտված դերառույթ՝ առավելապես ոչ միայն այս պատճառով, որ այդ խավի հավաքական կամքով էր անաղարտորեն պահպանվում համայնքի մշակույրը, այլև խաղացվող թատերախաղի բացասական նախատիպեր էին դարձնում այդ ներփակ աշխարհի «առանձնակիրուն ծանոթ մարդկանց»<sup>8</sup>: Ժատերախաղը չնայած ներկայացվում էր դիմակներով, սակայն հանրությանը հասկանալի ակնարկներով յուրաքանչյուր սրախոսություն ուղղվում էր կոնկրետ հասցեատիրոց: Հանդիսականները կորահում էին, թե իսուսն ում մասին է, թե ով է հեգինանքի գոհը:

«Առանձնակիրուն ծանոթ» աշխարհի կոնկրետ անձեր են նաև Սունդուկյանի գրական հերոսներից շատերը: Նա մի քանի առիթներով մատնանշել է քաղաքի

7 Р. Опенгеймер, Наука и культура. В кн. «Наука и человечество», М., 1964, с. 52.

8 М. Бахтин, Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и ренессанса, М., 1965, с. 230.

հանրության կողմից ճանաչվող իր գրական հերոսների նախատիպերը: Հայտնի է, որ «Խարաբալ» կատակերգության առաջին տարբերակում մի մոցիքովի (միջնորդի) տիպ ստեղծելիս, հեղինակը նկատի է ունենում քաղաքում այդ գրադարձությունը հայտնի մի կնօշ, որի անունով էլ կերպարը պետք է երևար բեմում: Ներկայացման կրկնության ժամանակ ներս է մտնում այդ կինը և պառկելով հատակին, աղածական ծայնով խնդրում է Սունդուկյանին իր անունը կատակերգությունից զնշել: Վողիսիներից մեկում («Եվայլն կամ նոր Դիոգենես») խնջույքին մասնակցում է Թիֆլիսում հայտնի նվազածու երգիչ Յավանջյուլը:

Ժամանակի գրականությանը բնորոշ այս երևույթը մեկ անգամ ևս վկայում է, որ հեղինակը ներկայացնում էր իմանականում «առանձնակիորեն ծանոր մարդկանց»: Չարունակաբար ի հայտ եկող այս օրինաչափության պատճառն այն է, որ պատմականորեն հեղինակի խնդիրը «առանձնակիորեն ծանոր մարդկանց և առանձնակիորեն ծանոր իրերի և երևոյթների աշխարիի հետ է»<sup>9</sup>:

Ահա թե ինչքան մերձ են գրական հերոսները կոնկրետ, իրական անձանց. «Այդ դեպքը նյուր ծառայեց ինձ իմ երկրորդ պիեսի՝ «Խարաբալայի» համար, որի մեջ դուրս բերված գիշավոր տիպերի հետ շփվել ու հարաբերության մեջ եմ եղել, իսկ Գևորգ Մասհոյանցը հենց ինքս էի»: «Խարաբալայի» Մասհոյանցը-ես եմ, «Էլի մեկ զոհի» Միքայելը ես եմ: «Պեպոյում» Պեպոն-դարձյալ ես եմ, հասարակ կինոտյի կերպարով: Այս վերջին հանգամանքը մասամբ երևում է նաև «Պեպոյի» հառաջարանից: Շատ կծու արտահայտություններ, որ Պեպոն ատում է Զիմզիմովին, հնարովի չեն, այլ ասել եմ ես, իմ հակառակորդին, իրականում վկաների ներկայությամբ, մինչև «Պեպոն» գրելը: «Փանդած օջախի» Օսեփր-իմ մոտիկ ազգականն է, իսկ Խախտն - հանգուցյալ մայրս է, որ ներկայացնում է բարի կանանց նաև իմ որիշ պիեսներում»<sup>10</sup>, -խոստովանում էր Սունդուկյանը:

Թիֆլիսի հանրությունը դիմուս բավարար տարբերակված չէր, դասերը համընդիմանուր մշակույթից բավարար չափով չէին ինքնորոշվել, հետևաբար տիպականացման անհրաժեշտությունը չէր կարող ծագել: Հերոսների կերտման Սունդուկյանի սկզբունքը, ըստ էության, տիպականացման գեղագիտական կարգով չի միջնորդավորվում: Ուստի՝ ժամանակին խորհրդային սունդուկյանագետների կողմից դրամատուրգին ննան գեղագիտական սկզբունքը վերագրելը երևույթի ընկալման համար կարևոր՝ պատմականության սկզբունքի խախտում էր:

Գարրիել Սունդուկյանի ստեղծագործությունը իմանականում, էապես որոշարկվում է համայնքի անաղարսության պահպանմանն ուղղված բանահյուսական դատական ծաղրախաղերը, բացօրյա քատերականացված խաղերը կյանքի կոչող վերոհիշյալ սկզբունքներով, տրամաբանությամբ և գործառությամբ: «Տոնախմբությունը (ցանկացած) մարդկային մշակույթի շատ կարևոր սկզբանական ծևն է: Այն չի կարելի բխեցնել և բացատրել հանրային աշխատանքի գործնական պայմաններից և նպատակներից: Եվ կամ բացատրության առավել գոեհիկ կերպ է այն պարբերական հանգստի կենսաբանական (ֆիզիոլոգիական) պահանջներից բխեցնելը: Տոնախմբությունը մշտապես իր մեջ ներառել է էական և խոր իմաստ ունեցող աշխարհայեցողական բովանդակություն: Ոչ մի «վարժություն» օրգանիզմում և հասարակական-աշխատանքային ալոցեսի կատարելագործում, ոչ նի խառ և ոչ մի հանգիստ կամ կարճատև դադար աշխատանքում իմքնին

9 Մ. Բախտի, նույն տեղում:

10 Գարրիել Սունդուկյան, Երկերի ժողովածու, «Դայաստան» հրատ., հ.3, Եր., 1975, էջ 417:

Երբեք չեն կարող դառնալ տոնական: Որպեսզի դառնան տոնական, դրանց պետք է միանա ինչ-որ բան՝ կեցության այլ ոլորտից, հոգևոր-զաղափարախոսական ոլորտից: «Երանք պետք է արտոնություն ստանան ոչ թե միջոցների և անհրաժեշտ պայմանների աշխարհից, այլ մարդկային գոյության բարձրագույն նպատակների աշխարհից, այն է՝ իդեալների աշխարհից»<sup>11</sup>, -զորում է ականավոր գրականագետ Մ. Բախտինը:

Հայ դրամատուրգը նույնային հետևողականորեն բացում է կյանքի նորօրյա, հանրությանը հայտնի հերոսների համայնական համաճանակ բարոյականությունից շեղված, հետևաբար՝ աղճատված էությունն ու նկարագիրը ծածկող վարագույրը՝ ի ցույց դնելու համար համընդիմուր բամաշայի ու **արդարության բարոյական դատաստանի**, որն ավատականության իդեալի էությունն է: Անգամ Սունդուկյանի դրամատուրգիայի բարձրակետը՝ «Պեպոն», կառուցված է այդ սկզբունքով: Պեպոն հրաժարվում է մեծահարուստ Զիմզիմովի հետ հաշտվելուց, նրա խարեւությունը ծածկելուց, ասելով. «**Մեկն էլ է չի՞մաց անե աշխարքին սրա արարունքը, մեկն էլ է հարայի չկանենա տա՞», վոր էս մարքը, վորին դիմունքը գուլս ին տափի, դիմունքը հարգում ին ու պատվում ին, դիմունքը մինձացնում, վառավորում ու երգինք բացրացնում...սա էն մարքն է, վորի համա վունչիչ սուրփ բան չկա աշխարքումը (ընդգծումը մերն է - Ա. Ա.)»<sup>12</sup>: «Աշխարքը» տվյալ պարագայում Թիֆլիսի համայնքն էր՝ հանրությունը, «խալիսը»:**

Նման համատեքստում հանրությունը՝ հանդիսատեսը, ներկայացման ընթացքում չնայած արտատեքստային, սակայն պարտադիր ներկայություն է և **մասնակից**: Հատկանշական է, որ համանման ներկայացումների ընթացքում հանդիսատեսը չնայած թեմում չէ, սակայն էապես անհրաժեշտ նաև ականակիցն է այդ բատերական միաստերիա իիշեցնող ծիսակարգության, նա է ներկայացնում **Դատաստանը**՝ հավիտնական արդարությունը կրող համայնական ողին, նրանն է դատաստանի իրավունքը: Եթե լուսավորիչ հեղինակների համար հանրությունն արդեն կրավորական դեր ունի, հեղինակն ուսուցիչ է, հանրությունը՝ սովորող, ապա համայնքի ավանդական առարինությունները պահպանելու պարագայում հեղինակը էապես տարբերակված չէ հանրությունից, քանի որ իր փորձը և պատկերացումները քաղել է համայնական հանրակեցությունից:

Հեգելի բնորոշմանը՝ պատմական նման ժամանակներում հեղինակը «որպես սուրյեկտ չի անջատվում, այլ լուծվում է իր պատկերած օբյեկտում...այստեղ ամեն ինչ ճանաչում է ոչ թե առանձին անհատը՝ իր գեղարվեստական արտացոլման սուրյեկտիվ յուրահատկությամբ, այլ լիապես, ամբողջովին անհատին կլանող համաժողովրդական զգացումը, քանի որ անհատը դեռ հանրության կեցության և հետաքրքրություններից սահմանազատված, ինքն իր համար ներքին պատկերացումներ և զգացումներ չունի: Որպես այդպիսի անքակտելի նիստանության նախադրյալ, անհրաժեշտ է կացություն, որի մեջ դեռևս չի արքնացել ինքնուրույն խոհածություն և գործունեություն...»<sup>13</sup>:

Նման անքակտելի միասնություն ունեցող այս **բատերական ծիսակարգով**, լրատ էության, համայնքի բարոյական ամրողությունը վերստին հաղթահանդես է ապրում, հաղթում են հանրությունը միասնացնող հավաքական կամքն ու արժեք-

11 Մ. Բախտի, նոյն տեղում, էջ 13-14:

12 Գարբիել Սունդուկյան, ԵԼԺ, հ.2, Եր., 1951, էջ 102:

13 Գեղել, Сочинения, т.14, М., 1958, с. 301.

Աերը: Պատահական չէ, որ, ականատեսների վկայությամբ, ներկայացումներն ավարտվելիս դահլիճը դղրդում էր ծափահարություններից և հափշտակված բացականչություններից: «Նույնիսկ հանդիսականք մասնակից են լինում այսպիսի ներկայացման ակամա արտանց բխած արձագանքներով և զգացման արտահայտություններով, որ անդադար լսվում էին վերնահարկից: Այսպիսի այիսսաների ներկայացման ժամանակ հայկական թատրոնում կարծես երկու տեղ է լինում խաղարկությունը, մինք բեմի վերա և մյուսը վերնահարկում, որը բեմի վերա եղած ներկայացման արձագանքն է (ընդգծումը մերն է- Ա.Ա.)»,<sup>14</sup> գրում է ժամանակակիցը «Պեպո» ներկայացման առիթով: Իսկ ներկայացումից հետո համբարները, կինտոնները հուզավառության ցույցեր էին կազմակերպում դրսում թատրոնի բակում, որը կարծես ներկայացման հարուցած զգացականության շարունակությունը լիներ:

Ըստ Էոթյանի, թատրոնի ծնունդը պատմական այդ համատերասուում պայմանավորված է համայնքի բարոյական կենսողրտը, ամբողջությունը պահպանող երթեմնի արդար արժեքային համակարգը վերստին կյանքի կոչելու համայնական հավաքականության բնագործվ: Սունդուկյանի ստեղծագործությունը, ինչպես նշվեց, էականորեն այդ իրողության արտահայտությունն է: Թերևս դա է պատճառը, որ նրա վողեիլների ծագումը և կառուցվածքը իմնականում միջնորդավորված չէ որոշակի գեղագիտությամբ, այլ ինտենցիոնալ է և մակածվում է համայնքի ավանդական ամբողջությունը կենսունակ ու անաղարտ պահող բանահյուսական համանշանակ արժեքներից և բացօքա թատերական ծիսակարգերի ավանդույթից:

Կատակներ և զավեշտներ գրվում էին հաճախ նաև ուղղակի զվարճացնելու, ծիծաղի վայելք պատճառելու համար «հարսանքատուն» իիշեցնող Թիֆլիսի կենսասեր ու զվարք հանրությանը: Նման մի միտում է թերևս ունեցել Գ. Սունդուկյանի «Գիշերվա սարքը խեր է» վերնագործ 1863 թ. հապենապ գրված երգախառն զավեշտը: Այստեղ գործողությունները, ըստ Էոթյան, ծավալվում են դաստերն ամուսնացնելու կենցաղային խնդրի շուրջ: Մանր առևտրական իրասածովը հակված է փեսացու ընտրել առևտրական դասից, որը հարստանալու հեռանկար ունի: Անլուծելի կնճիռը, սակայն, աղջկա համար երկու հարյուր բումանի օժիտն է, որը նա չուներ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար զավառական հոգեկերտվածք ունեցող մանր առևտրականը հնարներ է փնտրում և երկար մստրելուց հետո, ի վերջո, հանգում է մի զավեշտական որոշման: Նա ծրագրում է Թիֆլիսի Հայոց թատրոնը կապալով վերցնել և դերասանների փոխարեն ավելի էժան զներով բազագիսանի տղաներին բեմ հանել, թատրոնի երաժշտախումբը կրճատել ու սովորական, արևելյան եղանակներ նվազող դուրսկահարներով փոխարինել: Ծիծաղելին, անշուշտ, հերոսի ընտրած միամիտ հնարն է, զավառական պատկերացումներով թատրոնը վերածնելու հիմարագուն հավակնությունը: Իր ծրագիրը կյանքի կոչելու համար նա տուն է հրավիրում բազագիսանի տղաներից Արութին Շարտարովին խորհրդակցելու, որն էլ, տեսնելով իրասածովի դստերը, հիանում է նրա գեղեցկությամբ և առանց օժիտի ակնկալիքի, խնդրում է նրա ձեռքը: Կատակում ամուսնության խնդիրը, ըստ Էոթյան, համայնական պատվախնդրությունը շրջանցող, համայնքի իդեալից շեղվող, անաղարտ վաստակի առևտրական և քաղենիական հակումների ոլորտից

14 «Մեղու Յայաստանի», Թիֆլիս, 1871, N. 17:

հայտնվում է **բնական՝** փոխադարձ համակրանքի ոլորտում և ստանում անսպասելի՝ հերիաքային լուծում:

Վերոհիշյալ բանահյուսական թատերախսաղերում հերիաքների ոգով հաղթում, դրույյան տեր է դառնում **հասարակ ժողովրդի հերոսը**, որի շնորհիվ հանդիսատեսի հոգեկան աշխարհը բերկրանք է ապրում իրադարձությունների ցանկալի դասավորությունից, որը հոգեկան վայելքի, բավարարվածության, **կատարսիսի** էական դեր ունի նրա համար:

Թատերագետ Հ. Հովհաննիսյանի կարծիքով՝ «Այլ գործի կամ արիեսոյ մարդուն ծաղրելը շուկայական արիեստավորի հոգերանություն է՝ միջնադարյան առևտրա-արիեստավորական քաղաքից եկող»<sup>15</sup>: Դիպուկ նկատված այս երևոյթի արմատները թերևս ավելի խոր են և հասուկ են պատմության վաղ շրջաններին ևս: Այսպես, հայտնի է, որ մեր ազգային էպոսի՝ որսորդական դարաշրջանի հերոսները արհամարհանքով են նայում երկրագործի, առևտրականի զբաղմունքին, քանզի նրանք իրենց զբաղմունքով այլևս անկարող են դրսնորել հերոսական դարաշրջանի իդեալը: Այսպես էլ՝ զբաղմունքի բնույթի թելադրանքով առևտրականն այլևս անկարող է արդար վաստակի, ավատական պատվախնդրության և հոգեկան բարձրակարգ առաքինությունների իդեալ ներկայացնել: Առևտրի աշխարհի հերոսները, ընդհակառակը, իրենց սոցիալական վարքով ավերում էին արիեստավորական-համբարական համայնքի՝ դարերի կենսագրություն ունեցող իդեալական աշխարհը:

Հավաքական իդեալից շեղողը համայնքային իդեալի տեսանկյունից դատապարտված էր ծաղրի և արհամարհանքի: «Թմացա վուր միկրոսկոպիս ուզում առմի: Թե կանաս մեկը լավը ճարե ինձ համա կը. Էնդուր վուր միր հայերեմեն մե քանիսը էնենց մանդրացի ին, վուր էլ սադա աճկով չին ջոգվում... է-գերա էտ միկրոսկոպը շանց տա՝ թե էս ինչ կարքի կենթանիք ին (ընդգծումը մերն է-Ա.Ա.)»<sup>16</sup>: Այսպես է հեգնում Սունդուկյանը իր երգիծական ֆելիետոններից մեկում Թիֆլիսի հանրության կյանքում և մարդկանց հոգերանության մեջ կատարված շեղումները, հետևաբար՝ բարոյական անկումը: Հիշյալ Վոդսիլներում հեղինակը համայնական ոգու դիրքերից անշար, ներողամիտ ծաղրուծանակի՝ **մասխարայի** է ներարկում համայնքի արժեքներից շեղված, սակայն համայնքի համար դեռևս զգալի վտանգ ներկայացնող հոգերանությունը:

Այդուհանդեռձ, առևտրի զարգացումը Թիֆլիսի կյանքում արագորեն նակածում, տարրերակում ու որոշակիացնում էր հակունյա սոցիալական խավեր: Առևտրականների հետզինտե որոշակիացող խավի սոցիալական վարքով ծևավորվում էին նոր հոգերանությունն ու արժեքները: Երկատվում էր մարդկանց հոգերանությունը, արտաքուս՝ համայնքի արժեքներով ներկայացող առևտրական խավը նրա նորմերին անհարիր վարքը իրականում դրսնորում էր քողարկված կերպով:

Ուստի՝ Սունդուկյանի զավեշտում դժոխքի գեղարվեստական հնարանքի միջոցով բացահայտ և տեսանելի է դառնում բազմաթիվ երևելի թիֆլիսցիների իրական դեմքը («Օսկան Պետրովիչը էն կինքումը»): Առևտրական Օսկան Պետրովիչի հոգին դժոխքում տեսնում է բազում մեղքեր գործած, հավիտենական տաճաշանքների դատապարտված թիֆլիսեցի շատ մեծահարուստների, գոլտերի,

<sup>15</sup> Հենրիկ Շովհաննիսյան, Դաշտարշանի պատմություն. XIX դ., Եր., «Նաիրի» հրատ., 1996, էջ 144:  
<sup>16</sup> Գաբրիել Սունդուկյան, Ելք, հ.3, Եր., 1952, էջ 254:

մարդասպանների, ամուսիններին դավաճանած կանանց, խարերա բժիշկների և այլոց հոգիներ, որոնք այդտեղ էին հայտնվել իրենց բարոյազանց, ոչ քրիստոնեավայել վարքի պատճառով։ Մինչեւ դժոխքում հայտնվածներից Օսկան Պետրովիշին ծանոթ շատերը այս կյանքում ունեին ազնիվ բարերարի և բարեպաշտ մարդու համբավ։

Զավեշտի դժոխարժակ «քարեպաշտները» հիշեցնում են կոնկրետ անձանց, հանդիսատեսին «առանձնակիրուն ծանոթ մարդկանց», առկա են կոռակող նախատիպերը։ Ըստ Էության՝ հանրությանը հայտնի կոնկրետ անձերի բարոյաշեղ վարքը պատժված տեսնելու հանդիսատեսի բավարարվածությունը հոգեբանական տարարնույթ զուգորդումների արդյունք է և որոշարկվում է ոչ միայն համայնքի իդեալն ու բարոյականությունն անխախտ պահելու հանրության ենթագիտակցական բնագրից, այլև արդարության և ճշմարտության հավիտնական արժեքներից։

Ավանդապաշտության դիրքերից ծաղրվում են նաև ընդունված սովորույթների հանդեպ արհամարհական կեցվածք ընդունած, եւլուսական վարվեցողության ձևերով կուրացած և դրանք նմանակող «լուսավորվածները» («Եվայլն կամ նոր Դիոգենես»)։ Այսպես, նշված վողկիլի հերոսը շարունակարար հայտնվում է զավեշտական իրադրությունների մեջ։ Անթաքույց սիրահետելով գեղեցկաղեն Նինոյին, նա հայտնվում է նրա արևելյան, նահապետական մտածելակերպ ունեցող ամուսնու սարքած որոգայրում, որն ընտրում է Էլ «լաստված ֆրանտին» պատժելու կինտոյական կերպը՝ քատերականացված ծաղրուժանակը։ Քեչչի կինտոնների խնջույքը վերածվում է թերեսոլիկ, սերևերող երիտասարդին ծալընելու և հիմարացած վլճակի հասցնելու թաճաշայի։ Խնջույքի տեսարանը նոյն քաղաքային-ժողովրդական թատերախաղն է՝ հանված թատրոնի բեմ։ Փոքր-ինչ զինուցած Եվայլը ինքնամոռաց բարձրանում է տակառի վրա ու սայթաբելով՝ հայտնվում է տակառի մեջ, որտեղից էլ, կինտոնների անզուսպ հոհողոցների նվազակցությամբ, սկսում է բացատրություններ տալ իին աշխարհի տակառաբնակ հոյեն փիլիսոփա Դիոգենեսի մասին։

Գարիել Սունդուկյանի վողկիլները և կատակերգությունները, ըստ Էության, շարունակությունն են քաղաքային քանահյուսության, դատաստանական ծաղրախաղերի, որոնք խաղարկվում էին նոյն դերառույթով։ **Համայնքի ոգին ծաղրով էր պայքարում իր ամբողջությունը վտանգող երևույթների դեմ։** Համայնական ոգին առավել ընդգծված մերժութական կեցվածք ուներ հատկապես եկամուտ կենցաղավարության, կյանք թափանցած օտար և խորք սկզբունքների ու արժեքների հանդեպ։ Ի դեմս այդ կարգի դրամատուրգիայի, գեղարվեստական տեքստը ստեղծվում էր կենցաղի, մարդկանց ըմբռնումների, ավանդական մտածելակերպի իրապատում արտահայտությունների և տեղային կոլորիտի պահպանման հիման վրա՝ հիմք դնելով ժողովրդագրական և կենցաղային կոնկրետ հենք ունեցող գրականության, որը դրսնորվեց առաջին հերթին բարբառների և աշխարհաբարի, ժողովրդական կենդանի խոսքի վիրարկմամբ։

Սունդուկյանի հետագա կատակերգությունների բովանդակությունը և տիպարանությունը պայմանավորվում են մասսամբ արդեն՝ որոշակի լուսավորական գաղափարներով և առաջարրումներով, որով դրամատուրգի հայացքները մասնակիուն տարանջատվում և ինքնորոշվում են համայնական մտակերտվածքից, և նա ստանձնում է հանրության նոր, բարձրակարգ կենսաձևը

Կերտողի առաքելությունը: Նրա ժամանակակիցը և գործընկերը՝ դերասան Գևորգ Զմշկյանը, իր հուշերում գրում է, որ Սունդուկյանն «ատում էր մարդկության փտած ուժը և ձգում էր դեպի նորություն, պահպանելով և հնության առաքինությունը...»<sup>17</sup>: Ըստ Էրիքյան, այս ճշմարիտ դիտարկումը շեշտադրում է Սունդուկյանի ստեղծագործությանը հատուկ լրսավորական բարեչըջումների և միաժամանակ՝ համայնքային ոգու բարձրագույն առաջինության՝ **պահպան-դականության** երկշերտ համակցությունը: Եթե **առաջինը** դրսորվում է ավանդական կենցաղավարության որոշ ձևեր եվրոպականացնելու, հատկապես՝ եվրոպական ֆեմինիստական մշակույթի դիրքերից միրո, ամուսնության և ընտանիքի խնդիրները նոր ոգով կազմակերպելու շեշտված մտակարգումներով («Խարաբալ», «Էլի մեկ զոհ»), ապա **երկրորդը** հանդես է զայխ համայնակ-եցության առաջինությունները, մարդու աստվածակերտ նկարագիրը պահպանելու քրիստոնեական շեշտված մտահոգությամբ («Պեպո», «Քանդաօջախ»): Եթե առաջին կատակերգություններում հերիմնակը ստանձնում է լրսավորիչ ուսուցիչ դեր, ապա վերջիններում ենթագիտակցորեն կրկին ապավ-ինում է **հանրության Դատաստանին**:

Այսպես, «Խաթարքալ» կատակերգության մեջ շնայած, ըստ Էռիքյան, բախվում են ամուսնության, ընտանիքի վերաբերյալ հին և նոր լմբրնումները, սակայն թատերականացման սկզբունքը կրկին ավանդական քանաշան է, որի նպատակն է հանրությանը ի ցոյց դնել և ծաղրուժանակի արժանացնել մեծահարուստ վաճառական Զամբախտվի՝ իր տգեղ աղջկան խաբեությամբ ամուսնացնելու խորամաններ մտադրություններ:

Գարդիել Սունդուկյանի ստեղծագործությունները գործառվում են պատմական կացուրածների ու մշակույթների ակնհայտ փոփոխության համատեքստում: Լուսավորյալ մտավորական Գ. Սունդուկյանն ինչ-որ պահից արդեն հանդես է մտնում համայնքը բարեշրջողի որոշակի գաղափարներով և առաքելությամբ: Նրա կատակերգություններում ասպարեզ են զայխ արդեն գաղափարակիր հերոսներ: Առաջին իսկ պիեսներով նա առաջարրում է ընտանիքի և ամուսնական կյանքի կազմակերպման նոր ըմբռնումներ, որոնք իր կարդացած լուսավորիչների շարադրանքներում դրսորվում են անհատի, հիմնականում կնոջ ազատությունը տեսականորեն հիմնավորող սկզբունքային մտակարգումների քննածառերով (տիրապետություն):

Հայտնի է, որ ամուսնությունը, ընտանեկան հարաբերությունները ին ժիշտակում կարգավորվում էին դեռևս ավանդաբար, ունեին նահապետականութեան կազմակերպվող բնույթ: Երիտասարդները կին էին ընտրում հիմնականում ծնողների կամ միջնորդ կանանց՝ մոցիկովների աջակցությամբ: Նոր ժամանակների գրական հերոսները ընդգույն են այդ իրողության դեմ, առաջարրում են փոխադարձ սիրո հիմքի վրա ստեղծվող ընտանիքի հաստատության գաղափարը, սակայն նրանց շուրջերով հճում են հեղինակի գաղափարները: Այս առումով, այդ գաղափարակիր կերպարները չունեն լիարժեք հոգեբանություն, քանի որ իրականության մեջ նման հոգեբանությունը դեռևս չէր որոշարկվել և անհատի պատկերացումներում չէր նշակարգվել համապատասխան բարոյական, իրավական և ճանաչողական սկզբունքներով:

Պատմական առաջընթացը դեռևս բարյահոգերանական կովաններ չի

17 Գ. Զմշկյան, իմ հիշատակարանը, Եր., 1953, էջ 78:

ստեղծել իրենց նորօրյա հոգեբանությունն ունեցող հերոսների համար: Ուստի նրանք պարտվում են («Եյ մեկ զոհ»): Նման հերոսների սիրո սենտիմենտալ ավարտը թելադրվում է գեղարվեստական հյուսվածքի տրամաբանությամբ և ստեղծագործական հոգեբանության ոլորտներում քննելի մի իրողություն է, երբ իրական արգելվները հաղթահարելու անկարողության զգացողությունը երազանքի կամ արվեստի շնորհիվ է հասնում դրանք բարոյապես հաղթահարելու և արժեգործելու հնարավորությանը:

Փողային հարաբերությունների հարուցած հարստանալու կիրքը լուսավորական գրականության կողմից հակաշշովում է մարդու եռոյթունը վեհացնող արդարության, ազնվության, առաքինությունների՝ նահապետական հանրության իդեալով: Սունդուկյանն ի լոր հանրության հնչեցնում է, որ մարդու կյանքը պետք է նմանվի արդարության սանդուղով բարձրանալուն: Բոլոր առաքինությունները և կանոնը պատրակության զգացումն է, որ իհմնված լինելով անհամեմատ զարգացած զգայնության վրա, մարդուն ընդունակ է դարձնում անելու այն ամեն բարին և օգտակարը, ինչին նա ընդունակ է: Այս շեշտադրումը հնչում է ավատական հանրակեցության պատմականորեն այլասերման և քայլայման համատեքստում: Մի իրողություն, որը ողբերգական հնչեղություն ուներ ժամանակի մարդու համար: Գնալով ավելի է խորանում և որոշակի դառնում համայնքի որակափոխությունը: Ութունական թվականներից, Հ. Թումանյանի բնութագրմամբ, Թիֆլիսը սկսում է ավելի փոխվելու վիշանալ. «Եվ իհն Թիֆլիսը, որ մի առանձին ինքնուրույն աշխարք ու զվարք կյանք էր ներկայացնում իր համ ու հոտով, լեզվով ու աղարով, աղ ու հացով, նիստ ու կացով, անցել է արդեն: Անցել է, և անդառնալի»<sup>18</sup>:

«Դիմ տակն ու վրա էլավ միր աշխարքը», «Հեի գիդի ժամանակ, չարխի պես պտուտ իս գալի... էրեգ մեկել օրը ինչ էր, էսօր ինչ է... Քուն ու քարափը էլի էնդունք է ու մարթիքը ուրիշ դառնան»-, զրում էր Գ. Սունդուկյանը: «Արքարութինն ու ճշմարտութինը միր մեշք մումով պլոտելու է դասի, ու պատվականութինը, խոսկի տեր ըլիլը, նամուս, սիրաք, ախպարութին խո էլ իսկի մի՛ հարցնի: Էստունց մագիեր անթիվ ու անհեսաք խափի, ատելութին, նախանձ, գրիլ ու գուղութին»: «Պատիվն ու փառքը փուղինն է ու հարստութենինը (ընդգծումները մերն են - Ա.Ա.)»<sup>19</sup>:

Սունդուկյանի հեգնանքը, ծաղրը գրոտեսկային է դառնում հատկապես քաղաքի բարոյապես այլասերված հանրային բարեկին անդրադառնախս. «Գա՞նա էս հանգի էլի քաղաք կուլի աշխարքումը, ինչոր միր քաղաքն է. զա՞նա էս հանգի էլի մարթիք կուլին, ինչոր մինք ինք: Աստծուն պիտի փառը տանք, վուր մենակ միզ համա է պարախ, իր բոլոր օղորմութինը դիմի միզ վրա է փոխ: Քանի աշխարք ու երգիր միզ էրնեկ է տալի: ...Փահ, միզ համա ի՞նչ կա դժար. միր խիլքը, միր ուսումը, միր հալալութինը, միր արքարութինը, միր մարքասիրութինը, միր աշխատասիրութինը՝ ի՞նչ չի կանա զոհացնի: ...Էս պատճառով է, վուր միզմեն ամեն մեկը դիմունիս համա է փիքը անում, ու դիմունքս ամեն մեկի համա...: Վուր ասիս՝ մե քաղծած, մե ծարավ, մե զուու, մե ավազակ, մե ջիր կտրող, մե քալնող, մե փախցնող, մե գրիող, մե խափող, մե հաշող, մե սուտ օքում ուտող, մե կուտր, մե ուրիշի աշխատանքը տակն անող՝ մեկը, մեկը չկա, չկա միր

18 Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Եր., 1995 թ., էջ 29:

19 Գարրիել Սունդուկյան, ԵԼԺ, հ. 2, Եր., 1951, էջ 188, 117, հ. 3, Եր., 1952, էջ 251, 253:

քախկումը: Էս խոսկիրը դարդակ խոսկիր է...հնուց մնացած...քերնե քերանն անցած է կացի ու գիղինք, վուր էս հաճգի մարթիք էլ կան աշխարքումը, ուրիշ քախմերումը, ամա միր քախկումը, պա՛, պա՛, պա՛...Ամեն մեկը հալալ աշխատանքը իր համա շինիլ է անխախտ կանոն... Մարթիքը խո իրանց մեջը սերով, միարանութենով, անքանահ, մեկ-մեկու կարիքին հասնող, մեկ-մեկու ավտող, մեկ-մեկու վունչի չխնահող, մեկ-մեկու համա զլուխը իիդ դրած. իրանց օրումը վունց կոփվ, վունց դալմաղալ, դադաստիք դուռը չին էլ գիտի վուրքենն է. ի՞նչ հարկավոր է դադաստան, ամեն մարք արքարութենի կշիռը սարքած ունե սրտումն ու Ավետրանի զորութենով վարվում: ...Էսենց քախտավոր ապրում ինք միզ համա...»<sup>20</sup>, - հեզնում է Սունդուկյանը:

Համայնքի հնքնարավությունը վտանգում էին հիմնականում երկու գործոններ: **Առաջինը** նրա մշակույթի ոչնչացումն ու այլասերումն էր: Մինչեն համայնքը հենց այդ մշակույթով էր ամբողջական և միասնական: Մշակույթը համայնքի կենալորտն է, կենազգործութեուրյունը շնչավորողը, դրա շնորհիվ են դարերով արմատացած բնապատմական հանրակեցության պայմանները և արժեքներն ամրակայիտ ժողովրդի բնազդի մեջ: Եվ քանի որ համայնքը դարեր շարունակ պարզ վերարտադրության մեխանիզմով կարողանում է հարատել, ապա համայնքի բարոյական արժեքները ժամանակի մարդու ընկալում էր ոչ թե որպես **պատմական**, այլ որպես **բնական**, **հավիտենական** **արժեքներ**: Սակայն այդ ամենն այժման ժամանակ, քանի դեռ համայնքն ուներ իր իդեալական տեսքը: Եվ զարգացման տրամաբանությունն անողոքարար օրաոր որակափոխում էր հանրության կյանքը, ի հայտ բերելով հարաբերությունները կարգավորող նոր ձևեր և եղանակներ: Խմապես՝ «Այն ժամանակ միայն, երբ արդեն արտադրության տվյալ եղանակը կիսով չափ իր դարն ապրել է, երբ նրա գոյության պայմանները նշանակալից չափով անհետացել են և նրա հաջորդն արդեն բախում է դոները, այն ժամանակ միայն շարունակ ավելի ու ավելի անհավասար դարձող բաշխումն սկսում է անարդարացի թվալ-միայն այդ ժամանակ մարդիկ սկսում են իրենց դարն ապրած փաստերից դիմել այսպես կոչված **հավիտենական արդարությանը**<sup>21</sup>: Բարոյականության և իրավունքի աշխարհին ապավինող այս ցասումը, Ֆ. Էնգելսի կարծիքով, որքան էլ արդարացի է, սակայն այլևս չի նպաստու հետագա զարգացմանը:

Խոդի, արդարության **հավիտենականացման** պատճառը, հայ էթոնիոգերան Հայկ Ասատրյանի կարծիքով, միջնադարյան-նախապետական մտախառնվածքի ոգեղենությունն էր: Երևոյթների ծագման աստվածային սկզբի պատկերացումը հավիտենապաշտության կնիքով է դրոշմում այդ ժամանակի մշակույթը: Արժեքների հավիտենացուցիչը Աստվածային սկիզբն է: Նոր հարաբերությունների երևան գալով միջնադարյան համայնական մտախառնվածք ունեցող մարդը ողբերգականորեն է ապրում հավիտենական իմաստների և իրականության աններդաշնակության իրողությունը: Միջնադարում հավիտենականի կռահում կար բարոյականության մեջ, հոգին ավելի մոտ էր Աստծուն, խիդճն ավելի արթուն էր, միտքն ավելի հավիտենատես և հավիտենահակ, որից հետո առևտրական և փողային հարաբերությունները ասպարեզ են քերում չոր ներկայապաշտություն: Փողային հարաբերություններով որոշարկված նոր ժամանակների մարդու

20 Նույն տեղում, էջ 268, 269, 270:

21 Մարկս Կ., Էնգելս Փ., Избранные сочинения, в 9-ти томах, т. 5, М. 1986, с. 137-138.

պրագմատիկ մտածողությունն ու հոգեբանությունը մարդկային հարաբերությունների մեջ իրենց չորության և պաղության շունչը բերեցին: Այդ նոր հոգեբանությունն էլ սնուցեց մի անսանձ ազատականություն, որը ծնեց իմաստամերժ իրապաշտություն և ներկայազգաց եսապաշտություն: Դա էլ ինց խարարեց կոլեկտիվի հավաքական գոյությունն իմաստավորող հավիտենահակ կենսատու արժեքները, աղոտացրեց հավիտենականի զգացումը: Ուստի՝ շահը դարձավ ժամանակի մեծագույն առեղծվածը, բովանքը, երջանկության միջոցն ու նպատակը: Ավանդույթներից դատարկվեց ու աղոտացավ կյանքը, ներկայապաշտությունը սկսեց ավերել նախկին ոգեհեն աշխարհը, քրիստոնությունը կորցրեց իր կենսապղեցությունը: Պրագմատիկ այս ոգին իր կնիքը դրեց կյանքի բոլոր օղակների վրա, իրական շահի ըմբռնումը կապվեց տվյալ վայրկյանի հետ, իսկ վայրկենապաշտությունն ամեն ինչ դարձրեց **հարաբերական**<sup>22</sup>:

Սունդուկյանի ստեղծագործությունը համայնքում, ինչպես նաև ազգային մարմնում խարարված հավիտենական արդարությունը վերականգնելու պատմամշակութային արձագանք է: Փողային հարաբերությունների ծնած հոգեկան և քարոյական անկումը նոյն սրությամբ մատուցվել է «Պետո» և «Քանդած օջախ» կատակերգություններում: «Քանդած օջախ» Օսեփր երանությամբ է հիշում երեմնի ավատական կենսածկի երանելի ժամանակները, երբ սեր ու հավատարմություն կար մարդկանց միջև:

19-րդ դարում համայնքների մշակույթի այլասերման պատճառ էին դարձել նաև եվրոպական քաղաքակրթության, կենցաղավարության ընդօրինակումները: Այս երևույթի արձանագրումով, հետազայում Օսվալդ Շպենգլերը հիմնավորում էր, որ քաղաքակրթությունը հակունյա է էքնիկ մշակույթին: Եթե մշակույթը խորքային իրողություն է, ապա քաղաքակրթությունն ունի տարածականորեն ժավակելու միտում, ինչը և այլասերում ու ոչնչացնում է տվյալ համայնքի մշակութային արժեքները, դիմագրկում ժողովրդի անհատական նկարագիրը:

Եվ այդ պատճառով է, որ ժամանակին այս երևույթն արձանագրած Հ. Թումանյանը նույնպես նկատում էր. «Կորչում է ժողովուրդների անհատականությունը, առանձին ոգին, սեփական գույնն ու երանքը, էն ամենը, որ էնքան բնական են, ինչքան նրանց երկրի կիման ու բնությունը և ինչով որ նրանք կենդանի են, գեղեցիկ են, մեծ են: Չէ՞ որ ամեն ուժ սնունդ է առնում, զարգանում ու մեծանում իր հարազատ կիմայի մեջ... (ընդգծումը մերն է - Ա. Ա.)»<sup>23</sup>:

Համայնքն այլասերող երկրորդ գործոնը տնտեսության զարգացումն էր: Այս իրողությունն արձանագրած Գ. Պլեխանովի կարծիքով՝ իին սովորությունները չբանում են, իին արարողությունները խախտվում են այն ժամանակ, երբ մարդիկ մտնում են նոր փոխադարձ հարաբերությունների մեջ: Եվ համայնքը, որը դիմանում էր քաղաքական կյանքի փորբիկներին, անզոր և անպաշտպան է դուրս գալիս տնտեսական էվոլյուցիայի արամարանության առջև: Փողային տնտեսության և ապրանքային արտադրության զարգացումը փոքր առ փոքր փորում է այդ ներփակ կեցության իմքները: Տնտեսական քայլայող գործոնին գումարվում է նաև «պետության քայլայիշ ազդեցությունը, պետություն, որին հանգամանքների բուն իսկ ուժը հարկադրում է պաշտպանելու անհատակա-

22 Տես Ասատրյան Յ., Հայաստան արիական նախադիրը Առաջավոր Ասիայում, Սոֆիա, 1942, էջ 11:

23 Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Եր. 1995, էջ 28:

նույշան սկզբունքը»<sup>24</sup>, սկզբունք, որը տրամադրեն ներհակ է համայնակեցույթանը բնորոշ կողեկտիվիզմի ոգուն և մշակույթին:

Գ. Սունդուկյանը կարծում էր, որ հնարավոր է կանխել պետության նման բացասական դերը կանխակալ բարոյական և արդար դիրքորոշմամբ: Նրա կարծիքով՝ մարդասեր և արդար երկիրն այն «տերութինն է, որ համաշա չալիշ է գալի իր հալալ օրենքնիրը էնենց մտցնե են երգումը, յա քախկումը, վոր էս երգի, յա քախկի աղաքնիրն ու սովորութիննիրը անդամածի տակն ու վրա չանե»<sup>25</sup>:

**Խղճի, արդարության** արձարծումներն եական դերառույթ ունեն Սունդուկյանի կատակերգությունների համակառույցում: «Պեառ» կատակերգության ելակետը հենց այդ արժեքներն են: Կատակերգության հերոսների բախումն ընկալելի է պատմականության դիրքերից, իսկ սյուժեն հետևողականորեն կառուցվում է այդ բախումը արդարության և խղճի դատաստանի համատեսում հնչեցնելու համար: «Բաս քու սրտի դավթումն էլ լո՞ւնչիչ չկա գրած», «Բաս քու խճպտանը լո՞ւնչիչ չէ ասում թիզ, էլի. խո գիղիս վուր պարտ իս»<sup>26</sup>:

**Սունդուկյանը զգիտեր, թե ինչի՞ց է, որ նախկին բնական վիճակից առաջացավ այդ արտասալոր հանրությունը, սակայն համայնքին հավասար ապրեց հավիտենական արդարությունից մինչև հարաբերական ներկայապաշտություն ծավալվող ավերածության ողջ տրագիզմը:**

Սունդուկյանի ստեղծագործությունը հատկանշվում է առևտրական դասի շեշտված քննադատությամբ, որը, սակայն, չի նշանակում, թե նրա ստեղծագործությունն ունի **հասարակագիտական ենուախոր**: Նա, ինչպես ելորպական լրասավորիչները, պատմությունն ընկալում է որպես բնության օրենքներով և արարչակարդ հավիտենական ճշճարտություններով կարգավորվող իրողություն, որի պատճառով էլ նրա ստեղծագործությունն ամբողջությամբ տոգորված է քրիստոնեական մարդասիրության շեշտված բարոյախոսությամբ. «...Ասովածաշնչումը գրած է, ...վուր աստուծ մարքուս ստիղճից իր պատկիրքի. Էսու միտկն էն է, վուր մարքս աստծուն նմանվի չէ թե աճկով ու ունքով, ամա ճշմարտութենով ու արքարութենով (ընդգծումը մերն է - Ա.Ա.)»<sup>27</sup>:

Առերևույթ կարող է այն տպավորությունը ստեղծվել, թե հավիտենական արդարության, ճշճարտության, արդար վաստակի, խղճի և պատվախնդրության հնչեցումները Սունդուկյանի արվեստի էթիկան դարձնում են մերկապարանոց բարոյախոսություն՝ ռացիոնալիստական և ուսուցողական շեշտադրումնվ: Իր ստեղծագործություններում, սակայն, Սունդուկյանը արդարությունը թիւնեցնում է ոչ թե բանականությունից, այլ զգացմունքից՝ խղճի, սրտի ոլորտից, որն ունի աստվածային սկիզբ: Նրա ըմբռնմամբ՝ բարոյական կամքը բանական է, եթե գործարկվում է այդ սկզբի թելադրանքով, որի շնորհիվ և զորությամբ կարող է հաղթահարել անբնական, ցածրակարգ մղումներով պատճառաբանված հոգեթանությունն ու վարքը: Բարոյականությունը բանական էակի անընդմեջ օրենսդրությունն է իր անձի հանդեպ, իսկ այդ օրենսդրության բարձրագույն ելակետը և չափանիշը խիդճն է: «Ի՞նչ հարկավոր է դադաստան, ամեն մարք արքարութենի կշիռը սարքած ունե սրտումն ու Ավետրանի զորութենով վար-

24 Գ. Պիեխանով, Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. 1, Եր., 1960, էջ 270:

25 Գաբրիել Սունդուկյան, ԵԼԺ, հ.3, Եր., 1952, էջ 276:

26 Նույն տեղում. հ.2, 1951, էջ 64, 65:

27 Նույն տեղում, հ.3, 1952, էջ 128:

վուն»<sup>28</sup>, - հեզնանքով գրում է Սունդուկյանը: Դրամատուրգի կարծիքով՝ վերոհիշյալ արատների պատճառն այն է, որ մարդը մոռացել է Աստծուն, հեռացել քրիստոնեությունից, օտարվել Ավետարանի պատվիրաններից: Գրողը հորդորում է մարդկանց անարատ մնալու համար Աստծուց ուժ ու զորություն խնդրել: Արարշաստեղծ մարդու կոչվածությունն է՝ ապրել ու գործել այնպես, «վուր օղորմած Տերը ավելի օղորմա ու շփոշիկնի իր տփած օղորմութենի վրա»<sup>29</sup>: Դրա համար երկու լավ զենք է շնորհված մարդուն՝ «մեկը խիլքն է, մեկելը խճպտանքը: ...Խճպտանքի համար էլ, վուր յանդիշ չգանք, մե-մե կշիռը սարքինք սրտներում ու հալալ կշորինք լավն ու վաղը: ...Ես կշիռը փուղով չե ծախսում ու առնըլվում, ...ով գուզե մուրքա կարող է ճարի»<sup>30</sup>:

Սունդուկյանի բարոյական առաջադրումները ապավինում են կրոնին, քանի որ չունեն ինքնուրույն երիկական սկիզբ: Արդարությունը և խիղճը մարդու եռության մեջ ունենալով Արարշական սկիզբ՝ ընկալվում են որպես էութենական (սուրստանցիոնալ) հավիտենական արժեքներ: Քանզի՝ «Ինչքան էլ մարդը կրպիտ կերպով պատկերացներ գերազույն սկիզբը, աստվածային ոգին, նա անպայման նրանում տեսնում է ճշմարտություն, գերիմաստություն, բանականություն, արդարություն, որոնք բազավորում և հաղորդում են գոյության նյութական կողմը»<sup>31</sup>:

Եվ քանի որ աստվածային սկիզբ ունեցող խիղճը և արդարության զգացումը մարդկանց հոգում է, ապա Սունդուկյանն իր հերոսների եռության մեջ իրապես տեսնում է ճշմարտության, արդարության, խոնջի, կամքի ազատության պահանջը՝ որպես ինքն իրեն պսդավորող ուժ: Սունդուկյանն իր արվեստում արդարությունը բխեցնելով խոնջի, հերոսների հոգերանությունը դարձնում է առավել զգացմոնքային: Ավելին, գրողը դրանք ընդգծում է իր ժամանակի իրականության կոնկրետ հյուսվածքում, իր հերոսներին հոգող խնդիրների առնչությամբ, հնչեցնելով անհատական ճակատագրերի և անձերի սոցիալական փորձի ոլորտում, որի պատճառով էլ դրանց արծարծումները չունեն նոտադատողական բնույթ: Դրանով նա այդ արժեքները շնչափորել է ու համակել կենդանի ապրումներով: Սունդուկյանն իր ժամանակի լուսավորական ռացիոնալիզմի մշակույթ բերեց կենդանի մի շիր, որի ակունքը զգացմունքն էր: Պարտքի զգացումը հարաբերելով արդարությանն ու խոնջին՝ եվրոպական շատ լուսավորիչների ննան նա այն դիտում է որպես բոլոր կարգի առարինությունների և ազնիվ մղումների ակունք:

Այդպես էր դատում Ժ.-Ժ. Ռուսոն, որի կարծիքով՝ առաքինության օրենքները գրված են բոլորի սրտերում և դրանք ճանաչելու համար բավական է խորանա ինքն իր մեջ և կրթերից խաղաղված լրտքյան մեջ լսել սեփական խոնջի ձայնը<sup>32</sup>: Իսկ արդարության դատը, ըստ Ի. Կանտի, իր մեջ հակասություն է պարունակում, երբ այն փորձում են հաստատել իրավունքով, քանի որ իրավունքը ոչ միշտ կարող է հնչեցնել արդարության ձայնը: Հատկապես, եթե խոսքը գնում է ուրիշի իրավունքի մասին: Խստագույն իրավունքը մեծագույն անարդարություն է: Արդարությունը վերաբերում է միայն խոնջի դատաստանին<sup>33</sup>: Այդպես էին մտածում եվրոպացի լուսավորիչները, այդպես էր մտածում նաև Սունդուկյանը. «Վո՞ր օրենքն ինը

28 Նոյն տեղում, էջ 271:

29 Նոյն տեղում, էջ 263:

30 Նոյն տեղում, էջ 263, 264:

31 Ա. հ. Գերցեն, Ընտիր փիլիսոփայական երկեր, Եր. հ. 1, 1949, էջ 168:

32 Տես Жан-Жак Руссо, Օ влиянии наук на нравы, СПб. 1908, с. 56.

33 Տես Иммануил Кант, Сочинения в шести томах, т. 4, ч. 2, Москва, 1965, с. 144.

**դրուստ -դրուստ կատարում, վուր էս բանումն էլ մենակ օրենքը պատճառ բերինք (ընդգծումը մերն է - Ա.Ա.)»<sup>34:</sup>**

Պատկերացումների նման ստեղծագործական զուգորդումը Սունդուկյանի գեղարվեստական ժառանգության մեջ պատմական գործերացների ավանդապաշտ դիմակայություն չէ լոկ, այլ մի ինքնատիպ համադրականություն (սինկրետիզմ), տրոհված, մասնավորված իրականությունից վերստին ամբողջական բարոյական մարմին, օրգանիզմ կայացնելու մշակութային իրողություն: Ժատերական արվեստի հնարավորություններով՝ հեգնանքով ու սարկազմով, արդարության, խոճի հավիտենական արժեքների քարոզությամբ, դրամատիկ և սենտիմենտալ էֆեկտներով Սունդուկյանը զանում է վերստին ծևափորել ընդհանուր բանական և բարոյական կամք և ապահովել դրա հաղբանակը՝ մասնավորված հանրության հանդեպ, բարոյականացնել մասնավոր շահերով ու կամքով տրոհված հանրության օրգանիզմը, վերակերտել կուլտիվ բարոյական մարմին, ավանդական առաքինություններով կենսագործող հանրային «ես»՝ լուսավորված ժամանակի առաջավոր գիտակցությամբ, բարոյական կամքով, հարուստ ու ազնիվ զգացմունքների աշխարհով:

Հասարակության հիմքը բարոյական հավասարությունն է: Բարոյականության փիլիսոփայության համաձայն՝ բարոյականի հիմքում առկա է եռթենական, նախաստեղծ, ներհայեցողաբար ընկալվող ինչ-որ բան, որը եսասիրական և այլասիրական հանրաշահ մղումների միջն ստեղծում է ներդաշնակություն: Իրերի բնույթի մեջ առկա է մի կարգավորող սկզբունք, բնության մի ինչ-որ ներքուստ իրար կապակցող խորհրդավոր, առեղծվածային ուժ, որն էլ լրացն է կամա թե ալկանա նպաստելու ընդհանուրի բարությանը: Եվ քանի որ դա, իրոք, այդպես է, ապա իմաստուն թումանյանը չափազանց խորազգա և ճշմարիտ էր, եթե Գարրիել Սունդուկյանի ստեղծագործությունից առանձնացրեց ոսկու այն ծովածո կտորը, ինչը մնայուն է և բոլոր ժամանակների համար ազնիվ մետաղի հնչողություն ունի. «Ու անվերջ մեծ Պեպոն կյանքի բնմի վրա մաքուր, հաղբական՝ Զիմզիմովի դեմք կանգնած իր հալալ աշխատողի կոշտ ծեռքը կզարկի մորհակին ու թիֆլիսի բարբառով կորուսա՝ քու սրտումն ի՞նչ է գրած... ու կվարի իր ազնիվ կոփվը, ոչ թե մուրհակի համար, այլ ճշմարտության համար, արդարության համար<sup>35</sup> (ընդգծումն մերն է - Ա.Ա.):

Դանով իսկ՝ Գարրիել Սունդուկյանի ստեղծագործության էջերում շրջանառվող պատգամները աստվածաշնչյան պատվիրաններ են հիշեցնում. «Քոյր արարածների և աշխարհների Արարչի օրինությունը բոլորիդ վրա, եղեք երկարակյաց, առողջ և երջանիկ, սիրեք միմյանց: Ընդհանրապես սիրեք ճշմարտությունը և մարդամիտությունը ու մի անեք ուրիշներին այն, ինչ չեք ուզում, որ ուրիշներն անեն ձեզ»<sup>36:</sup>

«...Արթար գործեք, թե չէ մեռնելու օրը ձիր խճպտանքը կու զարթի ու իժում էլ չիր կանա օտկի (օգնի-Ա.Ա.) ձեզ»<sup>37:</sup>

34 Գարրիել Սունդուկյան, ԵԼԺ, հ.3, Եր., 1952, էջ 278:

35 Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Եր. 1995, էջ 29:

36 Գարրիել Սունդուկյան, ԵԼԺ, հ. 3, Եր. 1952, էջ 267:

37 Նույն տեղում:

## Summary

### **OLD TBILISI AND THE CREATIONS OF GABRIEL SUNDUKYAN**

Aram G. Alexanyan

Soviet literary criticism assessed the historical context and cultural calling of Gabriel Sundukyan as an expression of opposition to market capitalism. This understanding of research during the Soviet era came to rest on extremes and a failure to understand, because it was dictated by the Marxist theory of class struggle.

To explain the historical and cultural context of Sundukyan's creations with Marxist postulations is not scientific and disregards the principles of historiography. In reality, Sundukyan's creations are penetrated by a dramatism typical of a transitional era. Values characteristic to the new capital made by traders and money-lenders are in contraposition to Christian morality, the understanding communal justice and to the necessity of the restoration of man's essence. Thus, Sundukyan's creation in its historical-cultural calling is multi-layered and extremely original.